# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<25>> հունիսի 2026թ. N ՄՌ/350-Ա

ք. Արմավիր

**«ՏԱՐՈՆԻԿԻ ԳԱՌՆԻԿ ԳԱՌՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԻՆԵ ՂԱՎԱԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Արմինե Ղավալյանի 2026 թվականի հունիսի 23-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ   ե մ՝**

1. «Տարոնիկի Գառնիկ Գառնիկյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմինե Ղավալյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդ 2026 թվականի հուլիսի 6-ից օգոստոսի 7-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Արմինե Ղավալյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Տարոնիկի Գառնիկ Գառնիկյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել

«Տարոնիկի Գառնիկ Գառնիկյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Լուսինե Եղիազարյանին:

3. «Տարոնիկի Գառնիկ Գառնիկյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Լուսինե Եղիազարյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի հուլիսի 6-ից օգոստոսի 7-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Արմինե Ղավալյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 10-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,**

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** Подписано: GRIGORYAN ARAM 2509720082 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**